ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄԱԹՈՍՅԱՆ Մ. Ռ.

Հայտնի է, որ կառավարումը կազմակերպված տարաբնույթ համակարգերի սահմանված կառուցվածքների, դրանց գործունեության ռեժիմի պահպանումը և ծրագրերի իրականացումն ապահովող նպատակաուղղված գործունեություն է[1]: Կառավարման ժամանակակից հայացքների համակարգը ձևավորվել է համաշխարհային հասարակական զարգացման մեջ տեղի ունեցած օբյեկտիվ փոփոխությունների ազդեցության ներքո: Բազմաթիվ երկրների համար XX դ. առաջին կեսը հասարակական արտադրության արդյունաբերական զարգացման շրջան էր: Մի շարք առաջատար երկրներ, որ առաջին տեղերն էին զբաղեցնում աշխատանքի արտադրողականության ցուցանիշներով, XX դ. երկրորդ կեսին հաստատեցին հետարդյունաբերական զարգացման դարաշրջանին անցման սկիզբը: Փոփոխությունների գլխավոր գործոնը գիտատեխնիկական առաջընթացն էր: Հետպատերազմյան շրջանում տեղի ունեցավ համաշխարհային տնտեսության կառուցվածքի վերափոխում. տնտեսության մեջ աճեց այն ճյուղերի դերը, որոնք անմիջականորեն բավարարում էին մարդկանց պահանջմունքները: Արմատապես փոփոխվող տնտեսական միջավայրում կառավարմանը վերաբերող հայացքներն ու համակարգը ձևավորվեցին 1970-80-ական թվականներին: Կառավարման հարցերին նոր մոտեցումը պահանջեց կառավարման սկզբունքների վերանայում, քանզի հները նոր պայմաններում այլևս չէին գործում: 90-ական թթ. մեծ ուշադրություն էր դարձվում կառավարմանը մարդկային կամ սոցիալական տեսանկյունից: Կառավարման ժամանակակից հայացքների համակարգը գրականությունում հայտնի է որպես «խաղաղ կառավարչական հեղափոխություն»[2]:

Հասարակական կյանքի զարգացմանը և բարդացմանը զուգընթաց՝ բարդանում է և՛ կառավարման բովանդակությունը, փոխվում են դրա հիմնարար դրույթները, և՛ ընդլայնվում են կիրառման բնագավառները:

Հայտնի է, որ կառավարման բնագավառների համընդհանուր ընդունելության արժանացած դասակարգում դեռևս չկա, թեև առկա են տարբեր առաջարկություններ և մոտեցումներ: Դրանց մեծ մասն ուղղակի կամ միջնորդավորված վերաբերում է աշխարհագրական գիտությունների համակարգին:

Աշխարհագրության տեսանկյունից առավել ուշագրավ է Վ. Դ. Գրաժդանի՝ կառավարման դիրքերից մշակած հետևյալ դասակարգումը[3].

---

[1] *Философский энциклопедический словарь., М., 1988, с. 674.*

[2] Виханский О. С., Наумов А. И. *Менеджмент. Учебник, М., 1998.*

[3] Վալեսյան Լ., *Աշխարհագրական կանխատեսում, Ե., 2008, էջ 145:*

1. պետական տարածքային կառավարում (աշխարհագրություն, ռեգիոնալիստիկա և ռեգիոնաբանություն).

2. ոչ պետական տարածքային կառավարում (քաղաքական աշխարհագրություն, քաղաքացիական հասարակագիտություն).

3. արտադրական գործունեության կառավարում (տնտեսագիտություն, տնտեսական աշխարհագրություն, մենեջմենթ).

4. տեղեկատվական գործունեության կառավարում (սոցիալական տեղեկատվություն, աշխարհագրական տեղեկատվական համակարգ):

Փորձենք առանձնացնել միայն այն ոլորտները, որոնք առնչվում են հասարակական աշխարհագրության ուսումնասիրության շրջանակներին: Վերոնշյալ դասակարգումից ակնհայտ են կառավարման և աշխարհագրության փոխհամագործակցության հնարավորությունները: Ստորև առավել հանգամանորեն անդրադառնանք պետական տարածքային կառավարմանը:

Աշխարհագրության առումով առավել կարևորվում են կառավարման տարածքային տեսանկյունը և դրա արդյունավետ կառավարումը, քանզի երկրի տարածքային կառուցվածքի տաքսոնոմիական համակարգում առանձնացված քաղաքական տարածքային և վարչատարածքային միավորները միաժամանակ հանդես են գալիս նաև որպես սոցիալ-տնտեսաաշխարհագրական ուսումնասիրության օբյեկտներ:

Տարածքային կառավարումը պետության կողմից իրականացվող նպատակային գործունեություն է՝ ուղղված տնտեսության տարածքային կառուցվածքի տաքսոնոմիական միավորների կառավարմանը:

Այսօր տարածքային կառավարման, ինչպես նաև հասարակական աշխարհագրության առաջնային խնդիրներից մեկը հասարակական կյանքի տարածքային արդյունավետ կազմակերպումն է: Հասարակության մեջ յուրաքանչյուր կառավարում, առավել ևս տարածքայինը, հենվում է մի քանի ընդհանուր սկզբունքների վրա՝ կառավարման օբյեկտիվություն, ժողովրդավարություն, իրավական կարգավորելիություն, հրապարակայնություն, գիտականություն, մրցակցություն:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով աշխարհագրության և տարածքային կառավարման ջանքերի համատեղումը և փոխհամագործակցությունը կտան ցանկալի արդյունքներ, եթե առկա է համապատասխանություն վերոնշյալ սկզբունքներին:

Պետության տարածքային կառուցվածքից են նաև մեծապես կախված պետական և տեղական իշխանությունների կազմակերպման հարցերը, քանի որ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն իրականացվում է վարչատարածքային կառուցվածքային միավորների սահմաններում[4]: Տարածքային կառավարման կառուցվածքը պետք է համապատասխանի երկրի հասարակական-

---

[4] **Միրզոյան Վ.,** *Պետական կառավարում և հանրային կառավարում (Հայաստան, 14.X.2005):*

տնտեսական կառուցվածքին: Այսինքն՝ յուրաքանչյուր վարչատարածքային միավոր պետք է ներառի տարածք, որի վրա տեղաբաշխված են իր գործունեության և գործառույթների իրագործումն ապահովող համակարգեր[5]: Այդ համակարգերում իր ուրույն տեղն ունի ռեգիոնալ քաղաքականությունը, որի վերջնական նպատակը նույնպես երկրի զարգացման տարածքային առումով արդյունավետ կառավարումն է:

Տարածքային կառավարման և աշխարհագրության համագործակցության ուղղություններից ամենակարևորը և ամենահեռանկարայինը աշխարհագրական կանխատեսումն է, որը և գիտատեսական հիմք է տարածքային կառավարման համար: Կանխատեսումը ծառայում է կառավարմանը, և միաժամանակ կանխատեսման օբյեկտը աշխարհագրական կանխատեսման օբյեկտն է:

Աշխարհագրական կանխատեսման նպատակն աշխարհագրական միջավայրի և առանձին երկրահամակարգերի ապագա վիճակի և զարգացման հեռանկարների գիտականորեն հիմնավորված դատողությունների և հաշվարկների մշակումն է, որն անհրաժեշտ է և ծառայում է կառավարմանը: Այստեղից հետևում է, որ աշխարհագրական կանխատեսման ճշգրիտ արդյունքներից են կախված կառավարման վճիռներ կայացնելու արդարացիությունը և արդյունավետությունը: Այս իմաստով Հայաստանում տասնամյակներ շարունակ առկա են եղել տարածքային զարգացման անհամաչափ դրսևորումներ, բևեռացում, որն իր տրամաբանական շարունակությունը ստացավ անկախությունից հետո:

Խորհրդային ժամանակաշրջանում տարածքային կառավարումն իրականացվում էր կենտրոնացված պլանավորման տարածքային բաղադրիչի միջոցով: Սակայն պատմական փորձը ցույց է տվել, որ այդ կառավարումն արդյունավետ չէ, իսկ կառավարման վարչահրամայական մեթոդի պայմաններում խաթարվում է շրջանների բնականոն զարգացումը:

Նոր վարչատարածքային բաժանման պայմաններում անհամապատասխանություններ ի հայտ եկան տնտեսական շրջանների և վարչատարածքային միավորների միջև (տարբերություններ ի հայտ եկան ինչպես առանձին մարզերի, այնպես էլ համայնքների միջև): Ստեղծվեցին նաև մեծ թվով համայնքներ, որոնց հիմնական մասը ֆինանսական, աշխատանքային, հողային և այլ ռեսուրսների անբավարար լինելու պատճառով չեն կարող կազմակերպել իրենց բնականոն գործունեությունն ու զարգացումը[6]: Վարչատարածքային բաժանման նախագծման ժամանակ լիարժեք հաշվի չեն առնվել հանրապետության ռելիեֆային խիստ բարդ կառուցվածքը, կլիմայական պայմանների բազմազանությունը և որոշ

---

[5] Տե՛ս **Թումանյան Դ.,** *ՀՀ վարչատարածքային բաժանման օպտիմալացումը և տեղական ինքնակառավարման զարգացումը, Ե., 2003:*

[6] Տե՛ս **Ղազարյան Է.,** *Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման կատարելագործման հայեցակարգային ուղղությունները, Ե., 2004:*

համայնքների հեռավորությունը մարզկենտրոններից:

Շուկայական տնտեսության պայմաններում տարածքային կառավարման միջոց դարձավ սոցիալ-տնտեսական ռեգիոնալ ծրագրավորումը: Այս պարագայում էլ անհրաժեշտ էր պետության միջամտության և շրջանների ինքնազարգացման օրինաչափությունների համատեղում: Սակայն թերի կառավարման դեպքում առաջացան նոր խնդիրներ՝ պատճառ դառնալով ռեգիոնների միջև զանազան անհամամասնությունների: Այստեղ է, որ օգնության է հասնում ռեգիոնալ քաղաքականությունը իր համապատասխան մեթոդների՝ ռեգիոնալ պլանավորման, ծրագրավորման և կանխատեսման միջոցով՝ նպաստելով անհամաչափությունների նվազեցմանը:

Վերոնշյալից հետևում է, որ կառավարման՝ հատկապես տարածքային կառավարման արդյունավետությունը կախված է աշխարհագրական կանխատեսումից և ռեգիոնալ քաղաքականության փոխադարձ համագործակցությունից:

ОБЩЕСТВЕННАЯ ГЕОГРАФИЯ И УПРАВЛЕНИЕ

МАТОСЯН М. Р.

Резюме

В условиях рыночной экономики социально-экономическое региональное программирование стало средством территориального управления. В этой связи возникла необходимость совмещать закономерности регионального саморазвития и государственное посредничество. Однако при недостаточно успешном управлении это приводит к тем или иным региональным диспропорциям. И в этом случае необходимо задействовать региональную политику, предполагающую региональное планирование, программирование и прогноз.